

# ՊԱՐԿ ԵՒ ՔԱՐՈԶ՝ ԵՐԿՈՒ ԱՌԱՋԱՐԿ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ

*Posted on January 30, 2019 by Keghart*



Category: [Opinions](#)



**Վագրիկ Բագիլ, Գերմանիա, 1 Յունուար 2019**

Հայկական համայնքներում յաճախ խօսուում է «հայկական զգացումի» մասին, որ նա պակսում է երիտասարդութեան մէջ, որ առանց այդ զգացումի հիւժուում է «հայկական ինքնութիւնը», որ համայնքների առաջնահերթ պարտականութիւնն է «մատաղ սերնդին» փոխանցել այդ զգացումը: Հակիրճ ասած՝ «հայապահպանութիւնը» զգացական հարց է:

Իհարկէ ես դեռևս չեմ հասկացել թէ ի՞նչ է նշանակում «հայկական զգացում» կամ որո՞նք են այդ զգացումի տարրերն ու նշանները: Սակայն կռահելով ասածի և համոզուածի միջուկը պիտի «զգացում» բառը փոխարիէի «զգայարանք» բառով և վերոյիշեալ ամփոփումը՝ հետևեալով՝ «հայապահպանութիւնը» զգայական հարց է:

Չգայարանքները հայ մշակոյթի մէջ որբակեաց են, կարծես թէ երկրորդական լինեն, թերագնահատելի՝ նոյնիսկ մեղք, մինչ հոգեկանը ծնողանում է և դառնում ճշմարտութեան, բարութեան ու գեղեցկութեան ակունք: Հաւանաբար քրիստոնէութեան թիրըմբոնումն է, որ սատարում է նման նախապաշարունքների տարածմանը: Ճիշտ է, որ քրիստոնէութեան մէջ արմատացած է մարմնի ու զգայարանքների հանդէպ թերագնահատանքն ու արհամարանքը՝ այն աստիճան որ Աստուծուն մօտենալու և միանալու համար անհրաժեշտ է համարուում «սպանել» մարմինը և չեզոքացնել զգայարանքները: Պղոտինը (205 Ք.ծ.յ.) նոյնիսկ ամաչում էր, որ մարմին ունէր: Սակայն սա քրիստոնէական հայեցակէտ չէ, որովհետև նախ մարմինը Աստծոյ արարչագործութեան մաս է կազմում ու «բարի» է, և ապա կենդանի մարմինը հոգեկանի և զգայականի անքակտելի ամբողջութիւնն է: Թոյլն ու չարն ու մեղքը սերում են այդ ամբողջութիւնից և ոչ թէ միայն մարմնականից կամ զգայականից:

Սակայն անկախ աստուածաբանական այս մտքերից մարդաբանութիւնը մեզ ուսուցանում է, որ ճանաչողութեան հիմքը զգայարանքներն են: Թովմաս Ակուինացիի (1225-1274) նշանաւոր ասոյթը հանրածանօթ է՝ „Nihil est in intellectu, quod non fuerit in sensu“, որը նշանակում է՝ «Իմացութեան մէջ ոչինչ կայ, եթէ նախօրօք զգայարանքների մէջ չի եղել»: Լայպնիցը (1646-1716) լրացնում է այս գաղափարը շարունակելով՝ „nisi intellectus ipse“, «բացի ինքը իմացութիւնը»: Այն ինչ որ ինձ այստեղ հետաքրքրում է ոչ այնքան ճանաչողութեան եութեան հարցն է, այլ գործնական այն հետևումը որ նոր սերնդին «հայկականութիւնը» փոխանցելու համար պէտք է զգայարանքներից սկսել իմացութեան հասնելու համար: Չգայարանքները այսօր կրկին թերագնահատուում են, բայց լրիւ տարբեր պատճառով: Այսօր թուայնացումն է, որ եռածաւալ իրական աշխարհը սեղմում է համակարգիչի երկածաւալ աշխարհում, մարդը սակայն եռածաւալ էակ է և երեխաների կազմաւորման համար հոտոտելիքը, շօշափելիքն ու ճաշակելիքը նոյնքան կարևոր են ինչքան համակարգիչի միջոցով տեսնելն ու լսելը: Նոյնիսկ այս պարագային էլ իրական ծայներ ու գոյներ լսելն ու տեսնելը տարբեր է և այս

տարբերությունը սկստելն է կոչում է երեխաների սկսարագիրը: Ինքնութիւնն էլ թէ անհատականը և թէ հաւաքականը, online չէ, այլ offline, ոչ թէ երկծաւալ, այլ եռածաւալ:

Համայնքները փորձում են ամեն գնով առիւթներ էլ երիտասարդութիւնը, իրենց ներգրաւուել համայնքային աշխատանքների մէջ, որպէսզի երբ հին սերունդը հրապարակից քաշուի նոր սերունդը ստանձնի և շարունակի համայնքային կամ գաղութային աշխատանքները:

Այս ջանքերում համայնքներն ու հովիւները կեդրոնանում են երիտասարդների վրայ և յաճախ մոռանում են մանուկներն և մանուկների ծնողները: Մինչ բարդ է թափանցել երիտասարդների գիտակցութեան ու ներաշխարհի մէջ և աւելի ժամանակատար՝ եթէ նրանք արբուքի տարիքի մէջ են, աւելի դիւրընթաց է հասնել մանուկների անգիտակցին՝ զգայարանքների միջոցով: Հինգ զգայարանքների միջոցով կարելի է մանուկներին ընտելացնել, մտերմացնել հայ մշակոյթի հետ և յուսալ, որ աւելի ուշ, երբ երեխաները մեծանան, այդ մտերմութիւնը հանգի հարազատութեան: Սակայն այս բոլոր նկրտուճները ապարդիւն կը Ֆսան, եթէ ծնողները չգործակցեն և բոլոր պարտականութիւնը բեռնեն համայնքների և հոգևորականների ուսերին: Մինչ երիտասարդների պարագային ծնողների դերը սահմանափակ է, մանուկների պարագային դա էական է:



Այս ներածականից յետոյ ահաւասիկ իմ երկու առաջարկները:

## Ա) Պարկ

Ամեն հոգևորական թող երեխաներ մկրտելուց յետոյ ծնողներին մի պարկ նուիրի: Այդ պարկը թող հինգ զգայարանքները սնող հինգ առարկաներ պարունակի՝ բոլորն էլ հայկական յղուճներով, ինչպէս ներոյիշեալ ցանկում: Այս ցանկը ոչ սպառիչ է, ոչ վերջնական և ոչ էլ հարկադրական: Կարևորը սկզբունքն է, իսկ օրինակները փոխարինելի են:

- **Տեսողական** Այբուբենը՝ ամեն գիր տպուած, գծագրուած կամ լուսանկարուած առանձին թուղթի վրայ

- **Լսողական** Կոմիտասի որևէ մի մանրասկզբառակ
- **Ճաշակելիք** Նուռ
- **Շօշափելիք** Տեսանելիքի նման
- **Հոտոտելիք** Խոունկ կամ Papier d'Armenie

Երբ երեխան չոչում կամ խաղում է, թող գրերը երեխայի շրջապատում լինեն՝ յատակի կամ գորգի վրայ, որպեսզի ինքը խաղալու ժամանակ այդ գրերը անընդհատ տեսնի: Երեխաների աչքն ու ձեռքը պիտի տեսնեն, շօշափեն, ակռկեն այս առարկաներին, առանց որ ծնողները երկար բարակ այբուբենի կամ հայերեն լեզուի մասին խօսեն կամ այդ գրերը դիտումնաւոր երեխաների ուշադրութեանը յանձնեն: Իրենց առկայութիւնը երեխաների շրջապատում բաւարար է:

Նոյն անուղղակի կերպով թող երեխան խաղալու ժամանակ ենթախորքում Կոմիտասի երաժշտութիւնը լսի՝ օրը գոնէ մէկ ժամ: Այսպիսով մանուկները կամաց կամաց կը մտերմանան հայկական երաժշտութեան և հայկական դասական երաժշտութեան հետ, առանց ծնողների առընթեր բացատրութիւնների կամ մեկնաբանութիւնների: Նոյն սկզբունքը կարելի է կիրառել միւս առարկաների պարագային: Նուռի օշարակ և խունկի կամ Papier d'Armenieի բոյր:

Հոգևորականները թող այս պարկը մկրտութիւնից յետոյ յանձնեն ծնողներին և իրենց հակիրճ բացատրեն այս միջոցառման նպատակն ու սկզբունքը: Սա առաջին քայլն է: Իսկ երկրորդը՝ նոյնքան կարևոր՝ այն է, որ մկրտող հոգևորականները պարբերաբար, տարին երկու անգամ հանդիպեն ծնողներին և տեղեկանան թէ արդեօք իրենք գործադրում են այս առաջարկը և որոնք են իրենց փորձառութիւնները: Այս խօսակցութիւնն ու պարբերական յիշեցումը անհրաժեշտ է, որովհետև ծնողները նոյնքան ուղեցոյցի պէտք ունեն, ինչքան մանուկները:

## **Բ) Քարոզ**

Այս կիրառական կետին ուզում եմ ակելացնել վարդապետական մի կետ՝ պատարագիչների քարոզների բովանդակութիւնը:

Ինչքան լաւ կը լիներ, եթէ հոգևորականները նաև այն հարցի մասին քարոզէին, որ զգայարանքներն էլ կրթութեան ու կրթանքի կարօտ են, որ թուայնացած այս ժամանակում հաղորդակցութեան նոր միջոցները պէտք է գիտակցաբար ու վերապահութեամբ գործածուեն, որ ծնողները պէտք է իրենց ընտանեկան կեանքում ժամեր վերապահեն՝ մանաւանդ երեխաների ներկայութեամբ, որոնց ընթացքին իրենք ոչ բջիջային հեռաձայնը գործածեն, ոչ համացանցում դեգերեն, և ոչ հեռատեսիլ նայեն, այլ երեխաների հետ խաղան, երգեն, պարեն, արտասանեն, այսինքն բոլոր զգայարանքները բանեցնեն:

Հաղորդակցութեան այս նոր միջոցները մեզ նոյնիսկ անասնացնում են: Անասունը իր հակազդեցութիւնների մէջ անմիջական է, որովհետև իր բնազդը անխաթար է, միջդեռ

ասունը, այսինքն մարդը, թոյլ և անորոշ բնագոյ ունի և մշակոյթ է ստեղծում զսպելով իր կիրքերը, զգացումներն ու ձգտումները: Անասունը չի կարող ինքն իրեն զսպել և հետևում է իր բնագոյին: Հաղորդակցութեան նոր միջոցները մեզ ստիպում են SMSին, Facebookին, twitterին և այլն անմիջապէս պատասխանել, անմիջական ներկայութիւն ցուցաբերել, անմիջապէս կարծիք յայտնել՝ համաձայնել, հակառակել, հաւանել: Այս անմիջականութիւնը անասնական է, ոչ ասնական, մարդկային: Այսօրուայ գոնէ Եւրոպայում տիրող հանրային դիւրագրգռութիւնն ու յարձակողականութիւնը այս անմիջականութեան հետևանքներն են:

Ինչքան լաւ կը լինէր, եթէ հոգևորականները նաև այն հարցի մասին քարոզէին, որ երեխաների կեանքը կշռոյթի պէտք ունի՝ ամենօրեայ կանոնաւոր կրկնութեան: Այս առօրեայ կշռոյթը կոչուում է ծես: Ծեսը և ծիսակատարութիւնը միայն կրօնական երևոյթներ չեն, այլ ընդհանուր մարդկային: Ընտանիքներն էլ պէտք է մշակեն իրենց ծեսերը, որոնք երեխաներին վստահութիւն են ներշնչում և ինքնավստահութիւն տալիս: Ծեսն էլ կրթութեան ու կրթանքի մաս է կազմում:

Եւ ինչքան լաւ կը լինէր, եթէ հոգևորականները նաև այն հարցի մասին քարոզէին, որ խօսելուց բացի լռելն էլ առաքինութիւն է: Յովհաննէս Մանդակունի կաթողիկոսը (410-490) «լռութիւնը» դասում է, «խոնարհութիւնից» առաջ, կարևոր առաքինութիւնների շարքին:

Բեռլինի Յիսուսեան գիշերօթիկ մի վարժարանում տնօրէնը ամէն առաւօտեան աշակերտների հետ նախաճաշից առաջ մատուռ է գնում ոչ թէ առաւօտեան պաշտամունքը կատարելու, այլ երեք վայրկեան միասնաբար լռելու համար: Հայերէնում «լռել» և «լսել» բառերը նոյն ակունքը ունեն: Լսելու համար լռել է պէտք: Նաև եկեղեցում: Ինքնամփոփուելու ու կեդրոնանալու յատկութիւնները զօրացնում են երեխայի անհատականութիւնը և նպաստում իր առօրեայ յաջողութեանը: Դասական հռետորութիւնը ուսուցանում է ոչ միայն լաւ խօսելու արուեստը՝ *ars bene dicendi* այլ նաև լռելու արուեստը՝ *ars tacendi*, որը չի հակադրում խօսելուն, այլ ամբողջացնում է խօսելու արարքը: Լռելու ունակութիւնն էլ կրթութեան ու կրթանքի մաս է կազմում:

Երբ հոգևորականները այս հարցերի մասին քարոզեն, կ'օգնեն ընտանիքներին, կը նպաստեն երեխաների կրթութեանը, իրենց կ'ընտելացնեն հայ մշակոյթի հետ և կ'ուսուցանեն, որ աղօթել ոչ թէ միայն խօսել է նշանակում, այլ նաև լռել՝ լսելու համար:

